

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի, 2020 N 60

ՏՆՏԵՍՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի գրությունը՝ **որոշում եմ**.

1. 6 օր ժամկետով արգելել «Թի Ֆուր» ՍՊԸ Ստեփանակերտի մասնաճյուղի (ՀՎՀՀ 90044161) գործունեության ծավալումը:

2. ԱՀ առողջապահության նախարարին՝ ապահովել տնտեսվարողին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունն արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ